[1] Դուրս գրման ամսաթիվ		
19	Մարտ	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
19	Մարտ	2019 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	3101986535

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/	1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի								
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		

[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ձեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապահ. հարկի	Այդ թվում՝ ավելաց. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28201618բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անուն, ազգանուն)

Ստացող՝
(անուն, ազգանուն)

19/03/2019 15:35:06

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

17 դեկտեմբերի 2018թ. ք. Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ն.Մ.Գարեգինյանս, քննարկելով թիվ 23201618 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Մարալիկ քաղաքի բնակչուհի Գյուլնարա Գեղամի Գրիգորյանը 2018 թվականի նոյեմբերի 04-ին՝ ժամը 17:00-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 15:50-ի սահմաններում, որդին՝ Սամվել Սամվելի Գրիգորյանը, վիճաբանել է իր հետ, 3-4 անգամ հարվածել է գլխի հատվածին՝ պատճառելով ուժեղ ֆիզիկական ցավ:

Նշված հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի բաժնում նյութերի նախապատրաստման ընթացքում Գյուլնարա Գրիգորյանը բացատրություններ է տվել այն մասին, որ որդին վերջերս է ազատվել կալանավայրից, նրա մոտ նկատում է հոգեկան խնդիրներ, որի պատճառով սկսում է անհիմն խոսել և վիրավորել իրեն: 04.11.2018 թվականին՝ ժամը 15:50-ի սահմաններում նա վիճել է իր հետ, որից հետո 3-4 անգամ ձեռքերով հարվածել է գլխի տարբեր մասերին՝ պատճառելով ֆիաիկական ցավ: Այդ պահին իրենց տուն է այցելել աղջիկը՝ Նելի Գրիգորյանը և որդուն հեռացրել է իրենից, որից հետո մի քանի րոպե տևողությամբ վիճաբանությունը շարունակվել է, սակայն առանց հարվածների և քաշքշոցի: Նախկինում իր և որդու միջև եղել են կենցաղային խոսակցություններ, բայց դրանք լուրջ բնույթ չեն կրել: Որդու նկատմամբ բողոք-պահանջ չունի:

Գյուլնարա Գրիգորյանի դուստրը՝ Նելի Սամվելի Գրիգորյանը, բացատրություն է տվել այն մասին, որ 04.11.2018 թվականին՝ ժամը 15:50-ի սահմաններում, երբ իր բնակության վայրից գնացել է մորն այցելության, շենքի մոտ հասնելով՝ մոր բնակարանից լսել է վիճաբանությանը բնորոշ ձայներ և հասկացել է, որ եղբայրը՝ Սամվել Գրիգորյանը, վիճում է մոր հետ ու ծեծում նրան: Անմիջապես զանգահարել է 1-02 և հայտնել այդ մասին, որից հետո մտել է բնակարան: Մորից տեղեկացել է, որ եղբայրը հարվածներ է հասցրել նրա գլխին, իր ներկայությամբ Սավլեը կրկին փորձել է հարվածել մորը, սակայն ինքը թույլ չի տվել:

Սամվել Սամվերի Գրիգորյանը բացատրություններ է տվել այն մասին, որ 04.11.2018 թվականին՝ ժամը 15:50-ի սահմաններում ընտանեկան հարցերի շուրջ վիճաբանել է մոր՝ Գյուլնարա Գրիգորյանի հետ, քանի որ վերջինն իրեն վիրավորական բառեր է ասել, որից հետո 3-4 անգամ հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Նախկինում ևս մոր հետ վիճաբանել է, սակայն նրան չի հարվածել: Կարավածից հետո հաշտվել է մոր հետ, չի առարկում, որ քրեական գործի հարուցումը մերժվի բողոքի բացակայության հիմքով:

Նյութերում առկա են քրեական գործ հարուցելը մերժելու մասին 30.06.2014 թվականի և 07.11.2014 թվականի որոշումներ, որոնց ուսումնասիրությամբ տեսանելի է, որ Սամվել Սամվելի Գրիգորյանը 20.06.2014 թվականին ծեծի է ենթարկել մորը՝ Գյուլնարա Գեղամի Գրիգորյանին, իսկ 26.10.2014 թվականին խոշտանգել է նրան: Երկու դեպքում էլ նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է դիմողի բողոքի բացակայության հիմքով:

Նյութերում առկա է նաև Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 23.10.2015 թվականի դատավճռի պատճենը, որի ուսումնասիրությամբ տեսանելի է, որ Սամվել Սամվելի Գրիգորյանը 2015 /ըստ երևույթի՝ 2014 թվականի/ թվականի դեկտեմբերի 05-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ երաժշտության ձայնն իջեցնելու հարցի շուրջ վիճաբանել է մոր՝ Գյուլնարա Գեղամրի Գրիգորյանի հետ, դիտավորությամբ ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա դեմքին, մատը մտցրել է բերանը՝ վերջինի առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:

Բացի այդ Ս.Գրիգորյանը 2015թ մարտի 17-ին վիճաբանել է Մ.Դավթյանի հետ և նախապես իր հետ վերցրած դանակով երեք անգամ հարվածել է վերջինին՝ որովայնի առաջնային պատի հատվածին՝ պատճառելով առողջությանը վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

15.10.2015 թվականին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որոշում է կայացվել Ս.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ ամբաստանյալի հետ տուժող Գյուլնարա Գրիգորյանի հաշտվելու հիմքով, իսկ 23.10.2015 թվականի դատավճռով Ս.Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 3 տարի 6 ամիս ժամկետով:

Ստացվում է, որ պատիժը կրելուց և տուն վերադառնալուց հետո Սամվել Գրիգորյանը դարձյալ բռնություն է գործադրել մոր՝ Գյուլնարա Գրիգորյանի նկատմամբ, այսինքն՝ վերոգրյալից կարելի է ողջամտորեն հետևության գալ առ այն, որ Գյուլնարա Գրիգորյանը պարբերաբար ենթարկվել է ընտանիքում ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ու իր անօգնական վիճակի փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Վերը բերված հետևությունները հիմնավորվում են նրանով, որ սույն դեպքում կատարվածի մասին ոստիկանություն է ահազանգել ոչ թե Գ.Գրիգորյանը, այլ նրա դուստրը, որից հետո միայն նա տվել է հաղորդում, այսինքն՝ անձամբ չի նախաձեռնել որդու ապօրինի գործողությունները կանխելու համար իրավապահ մարմիններին դիմելը, որի պարագայում հնարավոր է արժանարար ավելի վատ վերաբերմունքի:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Գ.Գրիգորյանը ներկայում հաշտվել է որդու հետ, չի ցանկանում, որ նա պատժվի և նրա նկատմամբ բողոք-պահանջ չունի, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանով նա փորձում է մեղմել ստեղծված իրավիճակը՝ որդու կողմից ավելի վատ վերաբերմունքի չարժանանալու համար:

Հարկ է փաստել նաև, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ նախկինում գործադրված բռնություններից հետո դարձյալ ֆիզիկական բռնություն գործադրելու հանգամանքը վկայում է կրկին նրա նկատմամբ բռնություն գործադրվելու հավանականության բարձր աստիճանի մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ... 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Հաշտությունը թույլատրվում է մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը»:

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցելու քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում»:

Դեպքի առթիվ 2018 թվականի նոյեմբերի 14-ին Շիրակի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 23201618 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Սամվել Սամվելի Գրիգորյանը 13.11.2018 թվականից 06.12.2018 թվականը գտնվել է Երևան քաղաքի «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժման մեջ՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ» ալկոհոլի գործածման հետևանքով ախտորոշմամբ:

Որպես կասկածյալ հարցաքննված՝ Սամվել Սամվելի Գրիգորյանը ցուցմունք է տվել այն մասին, որ սույն թվականի նոյեմբերի 4-ին՝ ժամը 15:50-ի սահմաններում, ընտանեկան հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ մոտ 3-4 անգամ ձեռքով հարվածել է մոր՝ Գյուլնարա Գեղամի Գրիգորյանի գլխի տարբեր հատվածներին, որից հետո միջամտել է քույրը Նելի Գրիգորյանը և վիճաբանությունը ավարտվել է:

2018 թվականի դեկտեմբերի 15-ին Սամվել Սամվելի Գրիգորյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել <<ստորագրությունը չհեռանալու մասին>>:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու համար պահանջվում են դատահոգեբանական և դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ. 244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 23201618 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/կասկածյալ՝ Սամվել Սամվելի Գրիգորյանը հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/եթե Սամվել Սամվելի Գրիգորյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ Սամվել Սամվելի Գրիգորյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/եթե Սամվել Սամվելի Գրիգորյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ Սամվել Սամվելի Գրիգորյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ Սամվել Սամվելի Գրիգորյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինեն քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 23201618 քրեական գործի նյութերը փորձագետին կտրամադրվի լրացուցիչ:

Քննիչ Ն.Մ. Գարեգինյան